ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 13 19.05.2016թ.

<<ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով
<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով,ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 22-ի <<Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին>> թիվ 1851-Ն որոշման՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնել <<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությանը:
2.Գույքի գտնվելու վայրն է՝Հայաստանի Հանրապետություն, Արարատի մարզ ,Սուրենավան համայնք
Գույքի ծածկագիրն է՝ 03-086-0254-0051
Գույքի մակերեսը՝ 0,47416 հա
Գույքի նպատակային նշանակությունը՝ ջրամբար՝սանիտարական գոտիով
Հողամասի գործառնական նշանակությունը՝գյուղատնտեսական նշանակության արոտավայր

Կողմ- 5 դեմ-0 ձեռնպահ -0

Պ. Ադամյան Ա.Աբրահամյան

Ա. Շահվերդյան

Կ. Մարտիրոսյան Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար Կ. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 14 19.05.2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇԳՐՏՄԱՆ ՈՒ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնքի հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետությանը: Հողամասի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթերի համաձայն /հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական 03.01.2012թ.-ի N03102012-03-0291, 11.02.2012թ.-ի N02112012-03-0310/ հողամասի մակերեսը կազմում է 0,47416հա: Սակայն պարզվել է, որ հողամասի հատակագծում առկա են որոշ անճշտություններ, որոնց ուղղման նպատակով իրականացվել է տարածքի մակերեսի և սահմանների ճշգրիտ չափագրություն քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի, հողաշինարարի որակավորում ունեցող անձի միջոցով:

Ըստ վերջինիս կողմից ներկայացված հողամասի հատակագծի անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հողամասի մակերեսի և սահմանների ճշտում՝ վերագրանցելով անշարժ գույքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 32-րդ և 38-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 որոշման պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Հայասանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնքի Բաղրամյան 56 հասցեի հողամասի փոփոխված հատակագիծը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 15 19.05.2016թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը առանձնացնելու և աճուրդ վաճառքի կարգով օտարելու:

Վեդու Ներքին Արփայի գոտուց.

1.Լոտ ծածկագիր 03-086-0002-0001-ից 1,82 հա վարելահող 4-րդ կարգ

Ընդամենը – 1,82 հա

2.Օտարվող հողամասերի աճուրդ-վաճառքի մեկնարկային գինը սահմանել հողամասերի կադաստրային արժեքի 100% չափով:

3.Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով օտարվող հողամասի նվազագույն մեկ չափաբաժինը սահմանել 1,0հա:

Կողմ- 5 դեմ-0 ձեռնպահ -0

Պ. Ադամյան Ա.Աբրահամյան

Ա. Շահվերդյան

Կ. Մարտիրոսյան Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար Կ.Կարապետյան

2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հողաշինարարի որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծի տվյալների հիման վրա:

3.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե Բաղրամյան 56, Սուրենավան համայնք

Կողմ- 5 դեմ-0 ձեռնպահ -0

Պ. Ադամյան Ա.Աբրահամյան

Ա. Շահվերդյան

Կ. Մարտիրոսյան Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար Կ. Պարապետյան